28. ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՃՂԱՑՊԱՆԸ

Ըլլալ ա, չիլլալ մին ճղացպան։ Սա ճղացումը նստած վախտը մին էլ ա տրեսնում ճղացեն քարը վրենը կացավ։ Տուս ա կյամ, թա տրեսնա հի՞նչ ա, տրեսնում ա դոնդուզլրդը քար քցած։ Նի յա մննում մեչ ղոլ, տրեսնում հաց չի կա։ Մին վեչ, էրկու վեչ...

Մեհեթ էլ, վեր քար ըն քցում, ճղացպանը կյողլ ա կենում, մին էլ ա տրեսնում, ըհը՛, մին աղվես երկու հացը եր կալավ, թա քյնա։ Ճղացպանը թուշին հաքյվան փռնում ա։

Աղվեսն ասում ա.— Ամմա՞ն գյունըդը՞ր, ճղացպան ախպեր, պաց թող, հինչու ասես կանեմ, վրեր ասես քյինա Ղալին քըերծան տակը ընգի, կքյինամ...

Ըտրանք ըտրանա ետր ախպեր ըն տառնում։ Միշտ մինտեղ ըն հաց օտրմ։

Շատ ըն կենում, խրեգյ ըն կենում, մին օր ճղացպանն ասում ա. — Աղվես ախպեր, պա օղում ըմ մին ախճիգյ օղիմ։ Աղվեսն ասում ա. — Ճղացպան ախպեր, տու տազ ըրա, յրես քյըզհետե թաքավերեն ախճիգյն ըմ ուզլական։

Ճղացպանն ասում ա.— Պա կըկյա՞՞։

Աղվեսն ասում ա.— Քյըեղ կործ չունես։

Մին օր Աղվեսը թաքավերեն տրոնավը անց կնալիս մին արծաթ ա քըթենում։

Քյնամ տոնան ծեն տամ, ասում.— Թաքավերն ապրած կենա, մին ծեր չափր տոք, տանեմ Ջանչախ թաքավերեն արծաթը չափենք։

Ջափը յոր ա օնըմ, քյնո̈ւմ։ Մըխրե կենում ըն, քըթա̈ծ արծաթը տըրնո̈ւմ ա չափեն օբրուչումը պիրո̈ւմ։ Թաքավէրեն տանը չափը թափ ըն տամ, արծաթը մաշան վէր ա ընգնում։

Մին օր էլ, էլ՞ա թաքավէրեն տռնավը անց կնալիս մին վըեսկե յա քըթենում։

Քյնո̈ւմ ա, ասում.— Թաքավէրը ապրած կենա, ծեր չափը տոք, տանեմ Ջանչախ թաքավէրեն վըեսկեն չափինք։

Տանըմ ա, մխրե կենում, վըեսկեն տըննո̈ւմ օբրուչումը, պիրում։

Թաքավէրն ո̈ւրա̈ն գյդենուն ասում ա.— Մին չափը թափ տվեք, էլ՞ա մաշին մնացած կինի՛։

Ջափը թափ ըն տամ, մին վըեսկե յա վէր ընգնում։

Թաքավէրըն ասում ա.— Էս շան տղես վէրքան վըեսկե օնե՛, վէր չափեն տակեն էլ ա մընում։

Մին քանե օրանը եռը աղվեսը քյնամ ա թաքավէրեն տռնը, ասում.— Թաքավէրն ապրած կենա, եկալ ըմ ախճիգյտ օղիմ Ջանչախ թաքավէրեն հետե։

Թաքավէրը ծեն ա տամ տռն, պադւ տամ, ասում.— Լա̈վ ըս ըրալ, շատ լա̈վ կինի՛։

Աղվեսը սկսում ա Ջանչախ թաքավէրեն թա̈րիփ անելը, թա̈.
— Լա̈վ, լա̈վ տներ օնե, իլխի օնե, շատ պա̈ներ օնե, բաղ օնե, բոստան օնե, հինչ գյիղա̈մ էլ հինչեր օնե՛։

Ըխճըկանը օղում ըն։

Ճղացպանը ասում ա.— Ա՛ղվես ախպեր, պա յըես ա̈լրո̈տ շո̈րավըս ը՞մ քյննա̈կան թաքավէրեն տռնը։

Աղվեսն ասում ա.— Տու արխային կաց, յըես ամմեն հինչ պիրլա̈կան ըմ։

Աղվեսը տո̈ւս ա կյամ թըթամնած քյունում թաքավէրեն տռնը, թա̈.— Պա ասել չը՛ք, Ջանչախ թաքավէրը կյալիս տեղը թըլանալ ըն, շո̈րերը հանալ, պա̈ց թողալ։ Մին ծեռք շո̈ր տվեքյ, տանիմ կյենա։

Թաքավէրը եր ա կենում ո̈ւրա̈ն շո̈րան մին ծեռք տամ աղվեսին, սա տանըմ ա ճղըցպանեն շո̈րերը հանում, ածում կյըետը, էն պիրա̈ծ շո̈րերը կյեց տամ, տըեռնըմ ա մին աբրաղովնի տղա, տրան էլ մին լա̈վ պընդըցնըմ ա, վէր ընդըեղ խոսե վեչ, խոսած տեղըն էլ աղվեսեն սոտերը պա̈ց չանե։

Քյինըմ ըն թաքավէրեն տռնը, նշան տամ, կյամ։

Ճղացպանը ասըմ ա.— Պա էտ լըհա տըհենց, պա հըրսանեքյ ընք անում, հարսը հի՞նչ տեղ պիրինքյ։

Աղվեսը ասում ա.— Պա, ճղա՛ցպան ախպեր, յրես մրեռա՞լ ը՞մ, վեր տու մտածում ըս, քյրեզ հետե չորս ատաժանի տներ ըմ թփլա-կա՞ն, տավար ըմ պիրլակա՞ն, վեր ուզլական էլ չրս, թա՛ քյրզհետե ճուր ածես, խմես, էտքանը յրես կանեմ, թա՛ վերչումն էլ իմ ղադ-ըրս գյիդա՛ս։ Կգյիդա՛ս, թա՛ չէ, էտ էլ տու վրս գյիդում։

Աղվեսը եր ա կենըմ, քյինում, տեսնըմ մին հարուստ մարթ ղըզընեն կրակեն, խորագյ իփում։

Ասում ա.— Տուք էս տոնը բեդմա թափիքյ, Ջանչախ թաքա-վերը ծրեզ յրրա հրրսընքավ կորեվ ա կյրլական։

Քյինում ա էտ ուրուգյունը Ջանչախ թաքավերեն հրսանեքյը անում, հարսը յոր օնըմ, կյամ էտ տոնը, նոքյարներեն էլ պնդրց-նում, վեր հնազանդ ինին թաղա թաքավերեն։

Հրսանեքյը պրծնում ա, լոխ ցըրև ըն կյամ։ Մին վախտ, վեր խոսկ-խոսկու վեր ա կյամ, աղվեսն ասում ա.— Ճղա՛ցպան ախպեր, վեր մրեռնեմ, մին լավ պադարագյ կանես, էսքան հարուստությունը քյրեզ ըմ տվալ։

Ճղացպանն ասում ա. — Արխային կաց, պա ըտէլ չըմ ընն-կա՞ն։

Մին օր աղվեսը կյամ ա, Ջանչախ թաքավերեն տռանը վեր ընգնում դիգյանցկանց սատկըմ։ Թաքավերը կյամ ա վրեննավը քացի տամ, սա տուրուր չի կյամ։

Նոքյարներեն կանչում ա, ասում.— Եկեքյ տրան տարաք տրղվրեցեքյ։

Կյամ ըն ըղվեսեն տանըմ, թա՛ քցին փոսը, սա եր ա կենում, կյամ, թաքավերեն կոշտը, թա՛. —էտ ա՞ քու բադարագյրտ։ Համին էս պենը մին էլա անըմ։

Թաքավերը էլհա բադարագյ չանըմ։ Աղվեսը կյամ ա, թա՛ կնգանը քշտեն փոչերը պա՛ց անե, թաքավերը թողում չի, ասում ա. — Վեր մին էլ մրեռնես, բադարագյ կանեմ։

Իրեքինջի դոնըմը աղվեսը ղըրթըղորթ սատկըմ ա։ Էս դոնըմ թաքավերը մին լավ բադարագյ ա անըմ, ըղվեսեն թաղըմ։ Ամմա ափսոս վեր էս դոնըմ նա գյուդում չի՞։

Էն հարուստությունը մնամ ա ճղրցպանեն ծեռքեն։ Դե տրեսեքյ աղվեսը հինչքան խորամանգյ ա, վրեր ճղացպանը թաքավեր էլ շինից, ընդրա հետե էլ թաքավերու ախճիգյ օղից։